



Կարգապահական գործ թիվ ԿԳ-14069

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հունվարի 26-ի թիվ 15- ընդունված

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/13-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ԿՐՈՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԵՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետև՝ **Պալատ**) խորհուրդը (այսուհետև՝ **Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Երվանդ Վարդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանին կազմով,

քարտուղարությամբ՝ Նոնա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանին (արտոնագիր թիվ 305) և Արմեն Անտոնյանին (արտոնագիր թիվ 1370) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

04.06.2014թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ է ստացվել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահությամբ դատավոր Դ.Բալայանի) կողմից 02.06.2014թ. կայացված որոշումը: Կայացված որոշմամբ դատարանը որոշել է. <<Դիմել ՀՀ փաստաբանների պալատին պաշտպաններ Կրոմվել Գրիգորյանին և Արմեն Անտոնյանին պատասխանատվության ենթարկելու համար>>:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

23.06.2014թ. ՀՀ Փաստաբանների պալատի նախագահի թիվ 203-Ա/ԿԳ-14069 որոշմամբ փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305) և Արմեն

Անտոնյանի (արտոնագիր թիվ 1370) նկատմամբ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4-րդ գլխի 4.1 կետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ (թիվ ԿԳ-14069): Կարգապահական գործը 02.07.2014թ. հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող փաստաբան Արշակ Թովմասյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Կարգապահական գործի նախապատրաստման, ինչպես նաև Պալատի խորհրդում կարգապահական գործի քննության ընթացքում Դիմողը որևէ մասնակցություն չի ունեցել:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 02.06.2014թ. կայացված որոշման պատճառաբանական մասի համաձայն. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործով որպես պաշտպաններ հանդես են գալիս փաստաբաններ ՀՀ փաստաբանների պալատի անդամներ Կրոմվել Գրիգորյանը և Արմեն Անտոնյանը:

<<Դատական նիստի ժամանակ ամբաստանյալի պաշտպան Կրոմվել Գրիգորյանը հայտնեց, որ խնդրում է դատական նիստը հետաձգել՝ նիստը նախագահողի դեմ ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու համար: Նախագահողը որոշում է կայացրել դատական նիստը ընդմիջել կես ժամով մինչև 14.20՝ պաշտպանին հնարավորություն տալով ինքնաբացարկ ներկայացնելու միջնորդություն ներկայացնել: Հայտարարված ընդմիջումից հետո պաշտպանները դահլիճում ներկա չեն գտնվել և դատարանը պարզել է, որ նրանք ժամը 14.05-ի սահմաններում լքել են դատարանի շենքը:

Դատական խորհրդակցական սենյակում քննության առնելով փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանի և Արմեն Անտոնյանի դրսևորած վարքագիծը, ինչի հետևանքով դատական նիստը ձախողվել է, դատարանը գտել է, որ սույն քրեական գործով դատական նիստի ընդմիջումից հետո դատարանի շենքից հեռանալով, փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանը և Արմեն Անտոնյանը իրենց դատավարական իրավունքներից օգտվել են անբարեխղճորեն և անհարգելի չեն կատարել իրենց դատավարական պարտականությունները, ինչով և խոչընդոտել են դատական նիստի բնականոն ընթացքին ու անհարգալից վերաբերմունք են դրսևորել դատարանի ու դատավարության մասնակիցների նկատմամբ:

...Դատարանը հիմք ընդունելով պաշտպանների դրսևորած վարքագիծը և այն փաստը, որ վերջիններս իրենց գործողություններով ակնհայտ անհարգալից վերաբերմունք են դրսևորել, թե՛ դատարանի և թե՛ դատավարության մասնակիցների նկատմամբ, ձախողելով դատական նիստը՝ դատարանը գտել է, որ նրանց նկատմամբ պետք է կիրառել դատական սանկցիա>>:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Կարգապահական վարույթի նախապատրաստման ընթացքում փաստաբան Կրոմվել Գրիգորյանը նախապատրաստողին է ներկայացրել գրավոր բացատրություն, իսկ փաստաբան Արմեն Անտոնյանը ստորագրել է նույն բացատրության տակ:

Ներկայացված բացատրության մեջ մասնավորապես նշված է. <<Որոշման կայացման առիթ է հանդիսացել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ.Բալայանի թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործով 02.06.2014թ. կայացված <<Պաշտպանների նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին>> ապօրինի որոշումը:

Անհիմն է դատարանի որոշման հետևությունն այն մասին, որ. <<դատական նիստի ժամանակ ամբաստանյալի պաշտպան Կ.Գրիգորյանը հայտնեց, որ խնդրում է դատական նիստը հետաձգել՝ նիստը նախագահողի դեմ ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու համար: Նախագահողը որոշում կայացրեց դատական նիստը ընդմիջել կես ժամով մինչև 14.20՝ պաշտպանին հնարավորություն տալով ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնել: Հայտարարված ընդմիջումից հետո պաշտպանները դադարեցին ներկա չեն գտնվել և դատարանը պարզել է, որ նրանք ժամը 14.05-ի սահմաններում լքել են դատարանի շենքը, որովհետև դատական նիստի ժամանակ ամբաստանյալի պաշտպան Կ.Գրիգորյանը երբ հայտնել է, որ նիստը նախագահող դատավորի դեմ ինքնաբացարկի միջնորդություն է ցանկանում ներկայացնել, միաժամանակ հայտնել է, որ ինքնաբացարկի միջնորդություն պատրաստելու և ներկայացնելու համար նախագահողի կողմից տրամադրված կես ժամը բավարար չէ: Նախագահող դատավորը չլսելով պաշտպանության կողմից առարկությունները հեռացել է նիստերի դադարից: Մինչ նիստը ընդմիջելը նախագահող դատավորի կողմից պաշտպանության հասցեին արվել են հետևյալ արտահայտությունները, ես կասեի սպառնալիքները. 509 սկավառակը հնարավոր չէ հետագոտել, նախաքննության մարմնի կողմից ապացույց ճանաչված ամբաստանյալի հեռախոսային վերծանումները չեն հրապարակում, կես ժամը բավարար չէ ինքնաբացարկ մի ներկայացրեք, ինքնաբացարկի համար ժամանակ չեմ տալիս, եթե հիմա չեք ներկայացնում, ես դատաքննությունը հայտարարում եմ ավարտված:

Դատարանի կողմից տրամադրված կես ժամ ժամանակն անգամ բավարար չէր Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքից հասնել Երևան քաղաքի Տիգրան Մեծի 45/22 հասցեում գտնվող փաստաբանական գրասենյակ և վերադառնալ: Նախագահող դատավորը այս ամենը գիտակցելով է կես ժամ ժամանակ տրամադրել: Եթե մենք հարգեինք նախագահող դատավորի ոչ օրինական կարգադրությունը մենք պետք է դատարանի շենքից չհեռանայինք և կես ժամ անց նիստին մասնակցեինք առանց ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու, իսկ դրա հետևանքները մեզ արդեն պարզ և հասկանալի էին, որովհետև այդ կապակցությամբ նախագահողը հայտարարել էր <<եթե հիմա չեք ներկայացնում ես դատաքննությունը համարում եմ ավարտված>>: Այդ օրը ինքնաբացարկ միջնորդությունը փաստաբանական գրասենյակում պատրաստելուց հետո մենք ներկայացել ենք դատարան, բայց դատական նիստն արդեն հետաձգվել էր:

Դատարան ներկայանալու մասին մենք հայտարարել ենք հաջորդ դատական նիստի սկզբում, մինչև ութ էջանոց ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելը:

Եթե մենք կես ժամը անցնելուց հետո ներկայանայինք դատական նիստին, դա իհարկե միայն հնարավոր կլիներ միայն դատարանի շենքից չհեռանալու պարագայում, նախագահողը այդ օրը կհայտարարեր դատաքննությունը ավարտված:

Իրականում ոչ թե պաշտպանության կողմի գործողությունների հետևանքով է այդ օրը դատական նիստը ձախողվել, ինչպես արձանագրված է դատարանի որոշման մեջ, այլ նախագահող դատավորի կողմից մինչև դատական նիստը ընդմիջելը իրականացված անօրինական գործողությունների հետևանքով, ինչը հիմնավորվում է դատական նիստի ձայնագրառմամբ: Առանց դատարանի շենքից հեռանալու և փաստաբանական գրասենյակ գնալու մենք չէինք կարող ինքնաբացարկի միջնորդություն պատրաստել:

Պաշտպանության կողմը քրեական գործի դատաքննության ընթացքում իրենց դատավարական իրավունքներից և պարտականություններից օգտվել և օգտվում են բարեխղճորեն, մենք մեր գործողություններով երբևիցե չենք խոչընդոտել դատական նիստի կամ նիստերի բնականոն ընթացքին և անհարգալից վերաբերմունք չենք դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Սույն բացատրությամբ տեղեկացնում եմ, որ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ.Բալայանի 02.06.2014թ. <<Պաշտպանների նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին>> որոշումն անհիմն է և ապօրինի:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի <<Պաշտպանը պարտավոր է ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին>>:

Իմ կարծիքով եթե դատավոր Դ.Բալայանի կարգադրությունը օրինական լիներ ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու համար, նա ոչ թե կես ժամ ժամանակ կտրամադրեր, այլ գոնե՝ մեկ աշխատանքային օր:

Այստեղից հետևություն, որ փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանի և Արմեն Անտոնյանի արարքներում առկա չեն փաստաբանի վարքագծի կանոնադրի 4.1 կետի խախտում և գտնում եմ, որ այդ հիմքով պետք է կարգապահական վարույթը կարճվի>>:

Պալատի խորհրդի նիստերի ընթացքում փաստաբան Կրոմվել Գրիգորյանն ըստ էության պնդեց վերը շարադրված բացատրությամբ արտահայտած իր դիրքորոշումը: Հայտնեց, որ 02.06.2014թ. ժամը 14.20 նշանակված դատական նիստին չի ներկայացել հաշվի առնելով երկու հանգամանք՝ առաջինը՝ ինքը չէր հասցնի 30 րոպեի ընթացքում հասնել իր գրասենյակ ու պատրաստել միջնորդությունը, երկրորդ՝ ինքը մտավախություն է ունեցել, որ իր ներկայանալու պարագայում դատարանը կավարտի գործով դատաքննությունը, առանց հետազոտելու պաշտպանության համար կարևոր ապացույցներ:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում,

նախապատրաստող Ա.Թովմասյանը ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի. <<Տվյալ պարագայում կրիչի ձայնագրատման վերլուծությունից երևում է, որ պաշտպանի և դատավորի միջև ընթացել է զուտ իրավական բնույթի բանավեճ և դատական նիստին դատավորի կողմից սահմանված ժամկետում չներկայանալը ավելի շուտ կարելի է դիտարկել որպես տեխնիկական բնույթի՝ քան որպես անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ>>:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 08.09.2014թ.:

Սույն կարգապահական գործով Պալատի խորհուրդը գումարել է երկու նիստ՝ 07.11.2014թ. և 26.01.2015թ.:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդը հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանը և Արմեն Անտոնյանը Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործով ներգրավված են որպես ամբաստանյալ Դ.Թամրազյանի պաշտպաններ:
2. 02.06.2014թ. տեղի ունեցած դատական նիստի ընթացքում դատարանն առաջարկել է պաշտպան Կ.Գրիգորյանին դատական նիստի քարտուղարի համակարգչի օգտագործմամբ համապատասխան լազերային կրիչից հրապարակել քրեական գործով որպես ապացույց ճանաչված հեռախոսագանգերի մուտքային ու ելքայի զանգերի վերծանումները, որոնք պաշտպանն ինքն էր միջնորդում ամբողջությամբ հրապարակել: Պաշտպան Կ.Գրիգորյանը, սակայն, հրաժարվել է հրապարակումն իրականացնել նիստերի քարտուղարի համակարգչի օգտագործմամբ, խնդրելով իրեն տրամադրել վերծանումների թղթային տարբերակը: Վերծանումների առաջին էջերի տրամադրումից, հետո, սակայն, պաշտպանը հայտարարել է, որ վերծանումների ոչ բոլոր սյույակներն են տպագրվել:
3. Նիստը նախագահող դատավորը, հարց է հնչեցրել, թե դատաքննությունը լրացնելու այլ միջնորդություններ կան արդյոք:
4. Պաշտպան Կրոմվել Գրիգորյանը խնդրել է դատական նիստը հետաձգել՝ նիստը նախագահողի դեմ ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու համար:
5. Նախագահողը որոշում է կայացրել դատական նիստը ընդմիջել կես ժամով մինչև ժամը 14.20:
6. Պաշտպան Կ.Գրիգորյանը հայտարարել է, որ այդ ժամանակը բավարար չէ ինքնաբացարկի միջնորդություն պատրաստելու համար:
7. Ժամը 14.20 շարունակված դատական նիստին ներկա չեն եղել պաշտպաններ Կրոմվել Գրիգորյանն ու Արմեն Անտոնյանը:

Շարադրված փաստերը հիմնավորվել են հետևյալ ապացույցներով.

1. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահությամբ դատավոր

Դ.Բալայանի) կողմից 02.06.2014թ. կայացված որոշմամբ:

2. Փաստաբան Կրումվել Գրիգորյանի կողմից ներկայացված բացատրություններով:
3. Փաստաբան Կրումվել Գրիգորյանի կողմից ներկայացված կրիչի վրա առկա՝ 02.06.2014թ. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում իր իսկ կողմից իրականացված ձայնագրությամբ:
4. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանից ստացված՝ 02.06.2014թ. դատական նիստի ձայնային արձանագրման համակարգչային կրիչով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված 06.11.2014թ. թիվ ԸԴՂ/14069 տեղեկանքի համաձայն փաստաբան Կրումվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305, ստացված 03.11.1997թ.) նկատմամբ 2006-2014թթ. ժամանակահատվածում 13 բողոքների և սանկցիաների հիման վրա հարուցվել է 10 կարգապահական վարույթ, որոնցից 8-ի դեպքում Պալատի խորհրդի որոշմամբ կարգապահական վարույթները կարճվել են, մեկի դեպքում նշանակվել է կարգապահական տույժ՝ նկատողություն, ևս մեկի դեպքում՝ կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն: Բոլոր կարգապահական տույժերը մարված են:

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված 27.06.2014թ. թիվ ԸԴՂ/883 տեղեկանքի համաձայն փաստաբան Արմեն Անտոնյանի (արտոնագիր թիվ 1370, ստացված 14.07.2012թ.) նկատմամբ 2012-2014թթ. ժամանակահատվածում այլ կարգապահական վարույթ չի հարուցվել:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբաններ Կրումվել Գրիգորյանն ու Արմեն Անտոնյանը թույլ են տվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4-րդ գլխի 4.1 կետի պահանջի խախտում հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4-րդ գլխի 4.1 կետի համաձայն. <<4.1. Վարվելակերպի կանոնները դատարանում Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ>>:

Փաստաբաններ Կրումվել Գրիգորյանի ու Արմեն Անտոնյանի գործողություններին ճիշտ գնահատական տալու համար Պալատի խորհուրդը

հարկ է համարում պարզաբանել հետևյալ երկու հարցերը.

1. Արդյոք օրինական էր դատարանի կողմից կայացված որոշումը՝ դատական նիստը մինչև 02.06.2014թ. ժամը 14.20 ընդմիջելու մասին,
2. Արդյոք ստեղծված էր այնպիսի անելանելի իրավիճակ, երբ պաշտպանների կողմից դատական նիստին ներկայանալու պարագայում դատարանը միանշանակ ավարտելու էր դատաքննությունը, հնարավորություն չընձեռելով պաշտպանության կողմին համապատասխան միջնորդություններ ներկայացնելու միջոցով իրականացնելու ամբաստանյալի արդյունավետ պաշտպանությունը:

Անդրադառնալով առաջին հարցին, Պալատի խորհուրդը ցանկանում է հատուկ շեշտել, որ չի անդրադառնում դատարանի կողմից ինքնաբացարկի միջնորդության ներկայացման համար պաշտպանին տրամադրված 30 րոպե ժամանակի ողջամտությանը, այլ դատարանի գործողությունները դիտարկում է բացառապես դատական նիստը ընդմիջելու և երեսուն րոպե անց այն շարունակելու որոշման տեսանկյունից:

Այս առումով Պալատի խորհուրդը գտնում է, որ նախագահող դատավորն իրավունք ուներ դատական նիստն ընդմիջելու և նշանակելու այլ ժամի և այս կատարելով գործել է իր լիազորությունների շրջանակում: Բնականաբար՝ դատական նիստի տեղի ու ժամանակի մասին տեղեկացված պաշտպաններն էլ պարտավոր էին ներկա գտնվել դատարանի կողմից հայտարարված ժամին սկսվող դատական նիստին, անկախ այն հանգամանքից, թե արդյոք ողջամիտ ժամկետ էր տրամադրված իրենց ինքնաբացարկի միջնորդությունն նախապատրաստելու համար:

Այս համատեքստում է խիստ կարևորվում առաջ քաշված երկրորդ հարցի պատասխանը: Պալատի խորհուրդը փաստում է, որ անհիմն են փաստաբան Կրոմվել Գրիգորյանի պնդումներն առ այն, որ իր կողմից դատական նիստին ներկայանալու պարագայում, դատարանը միանշանակ ավարտելու էր գործով դատաքննությունը: Նման եզրահանգման Պալատի խորհուրդը եկել է հաշվի առնելով դատական նիստի ընթացքում նախագահող դատավոր Դ.Բալայանի այն արտահայտությունը, թե արդյոք կան դատաքննությունը լրացնելու այլ միջնորդություններ, թե ոչ, ինչը վկայում է այն մասին, որ դատարանն առանց համապատասխան միջնորդությունների քննության առնելու նպատակ չի ունեցել ավարտելու դատաքննությունը: Բացի այդ, դատարանի կողմից դատաքննությունն ավարտելու մասին պնդումները հերքվում են նաև դատարանի հետագա գործողություններով, մասնավորապես այն հանգամանքը, որ 02.06.2014թ. դատական նիստից հետո մինչև Պալատի խորհրդի կողմից սույն որոշման կայացման օրը նույն դատավորի նախագահությամբ դեռ շարունակվում էր խնդրո առարկա քրեական գործով դատաքննությունը ինքնին վկայում է այն մասին, որ դատարանը որևէ նպատակ չի ունեցել ցանկացած գնով ավարտել գործով դատաքննությունը:

Նման պայմաններում Պալատի խորհուրդը փաստում է, որ փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանն ու Արմեն Անտոնյանը չեն գտնվել անելանելի վիճակում, պարտավոր են եղել ներկայանալ նշանակված դատական նիստին, իսկ դատական նիստին չներկայանալով խախտել են Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4-րդ գլխի 4.1 կետի պահանջները:

Փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանի և Արմեն Անտոնյանի նկատմամբ

նշանակվելիք կարգապահական տույժի տեսակն ընտրելիս Պալատի խորհուրդը հաշվի է առնում թույլ տրված խախտման բնույթը, ինչպես նաև փաստաբանների անձը բնութագրող հանգամանքները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանին (արտոնագիր թիվ 305) և Արմեն Անտոնյանին (արտոնագիր թիվ 1370) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնադրքի» 4-րդ գլխի 4.1 կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305) և Արմեն Անտոնյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբաններ Կրոմվել Գրիգորյանին և Արմեն Անտոնյանին և դիմողին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝

Ե.Վարդյան